

Լսվել է Ստեփանակերտի քաղաքապետի հաշվետվությունը

Մայրաքաղաքը զարգացման համար բավարար ներուժ ունի

Ստեփանակերտի քաղաքապետարանի 2014թ. գործունեության ամփոփմանը և մայրաքաղաքի առջև ծառայած հիմնախնդիրներին էր առնչվում քաղաքապետ Սուրեն Գրիգորյանի հաշվետվությունը, որին մի խումբ պաշտոնատար անձանց՝ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանի, արտադրական ենթակառուցվածքների զարգացման նախարար Հակոբ Ղահրամանյանի և մի շարք գերատեսչությունների պատասխանատուների ուղեկցությամբ ներկա էր ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը:

2014 թվականին բոլոր ուղղություններով իրականացված կապիտալ շինարարության ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 5 մլրդ դրամ: Ըստ Ս.Գրիգորյանի, հաշվետու ժամանակաշրջանում քաղաքապետարանի գործունեությունն ուղղված է եղել համայնքային նշանակության հարցերի լուծմանը և համայնքի սեփականության տնօրինմանը: Անդրադառնալով քաղաքապետարանի ֆինանսատնտեսագիտական գործունեությանը, նա մասնավորապես արձանագրել է, որ քաղաքային համայնքի 2014 թվականի տարեկան բյուջեի ընդհանուր մուտքերը կազմել են 1299545.6 հազ.դրամ կամ պլանավորված գումարի 97.0% -ը: Ընդ որում, մուտքերի 29.0%-ը կազմել են սեփական եկամուտները:

Այնուհետև, ըստ առաջնահերթության, քաղաքապետն անդրադարձ է կատարել քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, տրանսպորտի, կապի, աշխատանքի և սոցիալական ծառայության, առևտրի ոլորտներում, հասարակական կարգի պահպանության, պաշտպանության, կրթության և մշակույթի բնագավառում իրականացված աշխատանքներին, խոսել այն ձեռքբերումների մասին, որոնք վճռորոշ դեր են ունեցել Ստեփանակերտի սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովելու գործում: 2014թ. քաղաքային համայնքի բյուջեի և պետական միջոցների հաշվին մասնակի բավարարվել են բնակչության պահանջները՝ տների տանիքների վերանորոգման վերաբերյալ: «Բնակարանային շահագործման տնտեսություն» ՓԲԸ կողմից ընթացիկ վերանորոգման են ենթարկվել 265 բազմաբնակարան շենքերի տանիքներ, տեղադրվել են 500 գծ/մ. ցինկապատ անձրևաջրահեռացման խողովակներ ու ջրհորդաններ:

Խոսելով դրական միտումների մասին, քաղաքապետը միաժամանակ նշեց, թե բնակչահագործման տնտեսությանը չի հաջողվում լիարժեք իրականացնել իր լիազորությունները: Մատուցված ծառայությունների դիմաց հավաքագրված գումարները հիմնականում ուղղվում են բակային հավաքարարների աշխատավարձերի վճարմանը, ինչը պետբյուջեից ֆինանսավորվում է ընդամենը մոտ 40%-ի չափով: Մինչդեռ «Սանմաքրում» կազմակերպության և «Բուսաբանական այգի» ընկերության բանվորները պետական բյուջեից ֆինանսավորվում են 100%-ով:

Ջեկուցողն անդրադարձել է նաև քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող մյուս կառույցների գործունեությանը: «Ստեփանակերտի համայնքային ծառայությունը» 2014թ. աշխատանքներ է իրականացրել համայնքի կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների մասով՝ հաշվառման բազայի վարման, ներքաղաքային երթուղիների երթակարգավորման ծառայության, համայնքում հասցեավորման և հասցեների գրանցման գործառույթների վերաբերյալ: Համաձայն հաստատված ֆինանսական պլանի, ջրամատակարարման-ջրահեռացման ծառայության գծով նախատեսված 310.000.000 դրամի փոխարեն «Ջրմուղ կոյուղու» կողմից հավաքագրվել է 371.452.900 դրամ կամ առաջադրանքը կատարվել է 120.0 տոկոսով: Բնակչահագործման ծառայության գծով նախատեսված 120.782.6 հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 110.995 հազ.դրամ, ինչը կազմում է նախատեսվածի 92.0 %-ը: Աղբահանման ծառայության գծով 137.912.900-ի փոխարեն հավաքագրվել է 136.005.300 դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում «Ջերմային

տնտեսություն» ՓԲ ընկերությունը «Ձմեռ» ծրագրի շրջանակներում ապահովել է իր կողմից սպասարկվող կաթսայատների անխափան գործունեությունը: Հաշվի առնելով վերջին տարիների բնակլիմայական պայմանները, ինչպես նաև ելնելով ջեռուցման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից, քաղաքապետարանի կողմից առաջարկություն է ներկայացվել ԼԴՀ կառավարություն՝ ջեռուցման ժամանակաշրջանը Ստեփանակերտ քաղաքում՝ 120 օրից դարձնել 150 օր:

2014թ. ուշադրության կենտրոնում է գտնվել և մայրաքաղաքի սանիտարական մաքրության պահպանումը: Համայնքի տարբեր տարածքներում կառուցվել են թվով 12 նոր աղբահարթակներ, տեղադրվել 160 աղբարկղներ, վերանորոգման են ենթարկվել նախկինում կառուցվածները: Անցած ժամանակաշրջանում արդյունավետ է աշխատել և «Ջրնուղ-կոյուղի» ընկերությունը, ում գործունեությունը նպատակաուղղված է եղել մայրաքաղաքի բնակչության ջրամատակարարման և կոյուղու ցանցերի սպասարկման ծառայության որակի բարձրացմանը: Այսօր Ստեփանակերտի բնակչության 99.0 %-ը ապահովված է շուրջօրյա ջրով: Միևնույն ժամանակ ջրացանցի ապահովման աշխատանքները լիովին չեն ավարտված Սարին թաղում, Բարեպաշտ և Կրկժան թաղամասերի, Աջափնյակի որոշ հատվածներում: Բնակլիմայական պայմանների տեսանկյունից չնայած տարին անբարենպաստ էր, այնուամենայնիվ, ընկերությանը հաջողվել է ապահովել ջրի անխափան մատակարարումը բնակչությանը: Ս.Գրիգորյանը նշեց, որ 2015թ. նախատեսվում են շարունակել քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի բարելավմանը միտված աշխատանքները:

Տարին հաջող է եղել և «Ակադեմիկոս Թախթաշյանի անվան բուսաբանական այգի» ընկերության համար: Քաղաքի տարբեր փողոցներում իրականացվել են կանաչ գոտիների ընդլայնման և տարածքների սանիտարական մաքրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ կանաչ գոտիներն ընդլայնվել են ավելի քան 4 հազար քառ.մետրով:

Կենսապահովման խնդիրների լուծման տեսանկյունից քաղաքապետարանի ուշադրությունից չի վրիպվել լուսավորության ցանցի բարելավման հարցը: 2014թ. «Արցախէներգո» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղի հետ համատեղ իրականացվել են մայրաքաղաքի փողոցների, բակերի, խաղահրապարակների, զբոսայգիների արտաքին լուսավորության ցանցի շահագործման, պահպանման, վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ:

Հաշվետվության մեջ անդրադարձ կատարելով հողօգտագործման, համայնքի սեփականություն հանդիսացող հողերի «շրջանառման» հարցերին, քաղաքապետն իրավիճակը բնութագրելու համար իրական փաստեր արձանագրեց. 2014թ. հասարակական նշանակության, անհատական տների և արտադրական նշանակության օբյեկտների կառուցման համար ընդունվել է թվով 448 որոշում, պետական /համայնքային/ սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ՝ 246 պայմանագիր: Հողամասի վարձակալության համար կնքվել է 6, հողամասի ու անշարժ գույքի առուվաճառքի տրամադրման վերաբերյալ՝ թվով 240 պայմանագիր: Անց է կացվել Ստեփանակերտ քաղաքի պետական սեփականություն համարվող հողամասերի թվով 4 բաց աճուրդ: Միևնույն ժամանակ Ս.Գրիգորյանը հարցի առնչությամբ որոշ մտահոգություններ հայտնեց: Մայրաքաղաքի հեռանկարային զարգացման ծրագրով 2009թ. Ասկերանի շրջանի Խնածախ համայնքից Ստեփանակերտի համայնքին է հատկացվել 174.0 հեկտար հողատարածք, սակայն առայսօր չլուծված է մնում Խնածախի համայնքի և առանձին սեփականատերերի փոխհատուցման հարցը /ընդհանուր գումարը կազմում է 155.0 մլն դրամ/, ինչի պատճառով հնարավոր չէ իրագործել նշված տարածքի հետագա կառուցապատման ու շահագործման աշխատանքները:

Մայրաքաղաքում ցավոտ խնդիր է մնում տրանսպորտային երթևեկության բարելավման խնդիրը: Ստեփանակերտում ուղևորափոխադրումներն իրականացվում են թվով 5 ավտոբուսային, 3 միկրոավտոբուսային և մեկ հատուկ երթուղիների միջոցով, որոնք

պայմանագրային հիմունքներով սպասարկվում են «Ստեփանակերտ-սերվիս» ՓԲԸ և «Միեր» ՍՊԸ- կողմից: Քաղաքապետը նշեց, որ դեռևս չի հաջողվել ապահովել բնակչության տրանսպորտային սպասարկման պատշաճ մակարդակ: Եվ, որպես խոչընդոտման հիմնական պատճառներ՝ քաղաքապետը նշեց անհրաժեշտ քանակությամբ ավտոբուսների բացակայությունը, փոխադրող ընկերությունների կողմից երթուղիներում շարժակազմերի աշխատանքային գրաֆիկների հաճախակի խախտումները, բնակչության սպասարկման ցածր մակարդակը:

Հաշվետվության մեջ անդրադարձ եղավ առևտրի ոլորտին: 2014թ. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման նպատակով քաղաքապետարանի կողմից տրամադրվել է 1419 թույլտվություն, որի դիմաց գանձվել է 30409.85 հազ.դրամ տեղական տուրք: Վարչական իրավախախտումները հայտնաբերելու նպատակով կատարված ստուգումների արդյունքում կազմվել է 6 արձանագրություն: Ոչ սահմանված տեղերում առևտրի իրականացումն արգելվել և կազմվել է թվով 20 արձանագրություն: Արդյունքում՝ ի հայտ է բերվել 51 իրավախախտում: Ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելու համար հանձնաժողովի կողմից տուգանվել է 18 հոգի: Բարեկարգման կանոնները խախտելու համար տուգանքի է ենթարկվել 14 անձ, ինքնակամ շենք, շինություն կառուցելու համար՝ 4, ժամկետանց ապրանքներ վաճառելու համար՝ 5 և առանց թույլտվության տաղավար տեղադրելու համար 3 հոգի: Խանութներում և կրպակներում կատարվել է տնտեսվարող սուբյեկտների հաշվառում, իրականացվել տեղական տուրքերի գանձում ու համապատասխան թույլտվության տրամադրում:

Նպատակ ունենալով ապահովել քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանությունը, 2014թ. ԼՂՀ դատարաններում ապահովվել է Ստեփանակերտի քաղաքային համայնքի լիազոր ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստերին: Ընդդեմ Ստեփանակերտի քաղաքապետարանի հարուցված 4 քաղաքացիական գործերով՝ հարցերը մերժվել են: 24 վարչական գործերով 15 հայցապահանջներ ևս մերժվել և Ստեփանակերտի քաղաքապետի որոշումները թողնվել են ուժի մեջ: 9 հայցապահանջների մասով հայցերը, որոնցից 5-ը՝ բնակհաշվառման արտոնյալ հերթացուցակներում ընդգրկվելու է առնչվում, բավարարվել են:

Քաղաքապետն անդրադարձել է նաև կրթության և մշակույթի ոլորտում իրականացված աշխատանքներին: Քայլեր են ձեռնարկվել սովորողների կրթության գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու, հիմնարկների նյութատեխնիկական բազան հարստացնելու, նոր տեխնոլոգիաների մուտքը համակարգ՝ խթանելու, ուսումնական պարապմունքների, արտադասարանական-արտադպրոցական և սպորտային միջոցառումների արդյունավետ անցկացման ուղղությամբ: Հ 5 և h 10 դպրոցների բազայի վրա ստեղծվել են ամառային ճամբարներ, որտեղ ընդհանուր հաշվով հանգստացել են 440 երեխաներ: Բարձր դասարանների տղաներն իրենց հանգիստն անցկացրել են Այգեստանի «Վարդանանք» ճամբարում, իսկ զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների 11 դպրոցահասակ երեխաներ հանգստացել են Հունաստանում:

2014թ. հազեցած է եղել նաև մայրաքաղաքի մշակութային կյանքը: ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ քայլեր են ձեռնարկվել մշակութային միջոցառումների որակի բարելավման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ, իրականացվել են մի շարք նոր ծրագրեր: Պատշաճ մակարդակով են անցել Ամանորին, Հայրենյաց պաշտպանի և Արցախի Վերածննդի օրվան, Մայիսյան եռատոնին, ԼՂՀ անկախության հռչակման տարեդարձին, Ստեփանակերտի օրվան նվիրված միջոցառումները: Այդ կապակցությամբ կազմակերպվել են երգի և ասմունքի փառատոներ, տոնական համերգներ, տարբեր ցուցահանդեսներ: Ավանդույթ է դարձել երիտասարդական արշավների կազմակերպումը՝ Արցախի պատմամշակութային հուշարձաններ ու վանքեր, որոնք վերածվում են յուրահատուկ ուխտագնացության:

իր էլույթում քաղաքապետը շեշտադրումներ արեց նաև մայրաքաղաքներ Երևանի և Ստեփանակերտի միջև սկզբնավորված համագործակցության արդյունավետության վերաբերյալ: Բոլոր ուղղություններով տարեցտարի ընդլայնվում են կապերը: Երևանի քաղաքապետարանն ակտիվ աջակցություն է ցուցաբերել քաղաքապետարանի բաժիններին՝ գործառույթների կատարելագործման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, եկամուտների հաշվառման և հավաքագրման, հարկային դաշտի ուսումնասիրման գործում: 2014թ. համագործակցության շրջանակներում, պատվիրակությունների կողմից թվով 8 փոխայցելություն է կատարվել: Երևանի քաղաքապետարանը Ստեփանակերտի քաղաքապետարանին է նվիրել թվով 150 նստարան, տեղեկատվական շտեմարան ծրագրով համալրված ժամանակակից համակարգիչներ: Երևանի վարչական մի շարք շրջանների կողմից մայրաքաղաքի նախադպրոցական հիմնարկներին նվիրաբերվել են երաժշտական կենտրոն, համակարգիչներ, խոտինձիչ ագրեգատներ և այլն: Ստեփանակերտցիների համար հաճելի երևույթ էր Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի ուսանողների՝ վարդագույն տուֆից կերտած քանդակների տեղադրումը Ստեփանակերտի պուրակներում և քաղաքի այլ տեսարժան վայրերում: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ Ստեփանակերտում արդեն սկսվել են «Ազատամարտիկների այգու» հիմնադրման աշխատանքները: Հանգստի գոտին, որ կամբողջանա ճարտարապետական հետաքրքիր լուծումներով, յուրահատուկ նվեր կհանդիսանա ստեփանակերտցիների համար և կխորհրդանշի Արցախյան ազատամարտում նահատակված հայորդիների հիշատակը: Երևանի քաղաքապետարանը ստանձնել է նաև մայրաքաղաքում կառուցվող Աստվածամոր Սուրբ Հովանի մայր տաճարի հարակից տարածքների բարեկարգման և կանաչապատման աշխատանքները:

Ելույթ ունենալով հանդիպմանը և բավարար գնահատելով քաղաքապետարանի 2014թ. գործունեությունը, ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանն իր նկատառումները հայտնեց տարբեր ոլորտներում բաժինների և համայնքի ենթակայության տակ գտնվող կառույցների կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ՝ մատնանշելով այն առաջնահերթությունները, որոնք պիտի լուծում գտնեն 2015 թվականին և բնակչության կենսապայմանների բարելավման տեսանկյունից՝ էական փոփոխություններ արձանագրվեն ստեփանակերտցիների առօրյա կյանքում և նրանց կենցաղում: Երկրի ղեկավարն անդրադարձավ Ստեփանակերտի կառուցապատման ու բարեկարգման, ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերին՝ ընդգծելով մայրաքաղաքի ճարտարապետական ղեմքի անխաթար պահպանման անհրաժեշտությունը: Նշելով, որ այդ համատեքստում նշանակալի դերակատարություն կարող է ունենալ Ստեփանակերտի նոր գլխավոր հատակագծի ծնունդը, Բ.Սահակյանը համոզմունք հայտնեց, թե վերջնական արդյունքում կարևորագույն այդ փաստաթուղթը կլինի համապարփակ և հեռանկարային ու յուրօրինակ անձնագիր կհանդիսանա մայրաքաղաքի համար: Որպես խիստ կենսական նշանակության խնդիր, նա մինչև տարեվերջ անխուսափելի համարեց և քաղաքի շուրջօրյա ջրամատակարարման ծրագրի ավարտումը: Դրական որակելով քաղաքի սանիտարական մաքրության ապահովմանը և կանաչ տարածքների ընդլայնմանը միտված քայլերը, երկրի ղեկավարը միաժամանակ նշեց, թե շրջակա միջավայրի պահպանման, կանաչ գոտիների, պուրակների և զբոսայգիների ընդարձակման աշխատանքները շարունակական բնույթ պիտի կրեն: Այդ առումով նա ողջունեց Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ Ստեփանակերտում «Ազատամարտիկների այգի» հիմնադրելու գաղափարը և հույս հայտնեց, որ ծրագրի իրագործումը չի հապաղի:

Նախագահ Բ.Սահակյանը տրանսպորտը դիտարկելով քաղաքի կենսագործունեության կարևոր ուղղություններից մեկը, ուր վերջին շրջանում դրական տեղաշարժեր են նկատվում, միևնույն ժամանակ անբավարար գնահատեց

ուղևորափոխադրողների կողմից բնակչությանը ցուցաբերվող ծառայությունը: Անչափ դանդաղ է համալրվում մայրաքաղաքի ավտոբուսային հավաքակազմը, իսկ հաշմանդամների տրանսպորտային սպասարկման մակարդակը շարունակում է ցածր մնալ: Երկրի ղեկավարը գտնում է, որ ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացքում անհրաժեշտ է ուժեղացնել տրանսպորտային օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունը՝ պարտականությունների կատարման վերաբերյալ, ուղևորների նկատմամբ ձևավորել պատշաճ հարգալից վերաբերմունք:

ԼՂՀ նախագահին իր ելույթում անդրադարձավ նաև ամենացավոտ ու առավել շատ շրջանառվող հարցերից մեկին՝ բնակարանային խնդրին: Նրա խոսքով երկրի իշխանություններն այսուհետև ևս պետական միջոցներով և «արտաբյուջետային խողովակներով» կնպաստեն բնակչության բնակարանային պայմանների բարելավմանը: Այդ համատեքստում նա առաջնահերթ համարեց ՊԲ զինծառայողների, զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքներին հարմարավետ բնակարաններով ապահովումը: Ըստ Բ.Սահակյանի, հավանաբար, ընթացիկ տարում ավարտին կմոտենա զինծառայողների համար կառուցվող նոր թաղամասի շինարարությունը և զգալի թվով ընտանիքներ հնարավորություն կունենան բնակարանամուտ տոնել: Ապրիլի 1-ից արտոնյալ պայմաններով հանրապետությունում կսկսի գործել ևս մեկ հիփոթեքային ծրագիր, ինչը մասնավորապես երիտասարդների համար լավ առիթ է ունենալու ժամանակակից հարմարավետ բնակարաններ: Նախագահը իրազեկեց, որ մինչև 2016 թվականը բնակարաններ կստանան և նախկին «Ղարմետաքսկոմբինատի» հանրակացարանների բնակիչները, ովքեր գոյատևում են կենցաղային տարրական պայմաններից զուրկ անհրապույր կացարաններում: Բ.Սահակյանի տեսադաշտից չվրիպեցին նաև «Ջրմուղ-կոյուղի» տնտեսության, «Բնակարանային շահագործման գրասենյակ», «Սանմաքրում», «Ջերմային տնտեսություն» ընկերությունների հիմնահարցերը, որոնց գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու համար խոստացավ աջակցություն ցուցաբերել՝ միաժամանակ հորդորելով «նվիրումով աշխատել և չթերանալ պարտականությունների կատարման մեջ»:

Եզրափակելով խոսքը, ԼՂՀ նախագահը նշեց, թե 2015-ին մի շարք կարևոր ու հիշարժան իրադարձություններ և համապետական միջոցառումներ են սպասվում /խորհրդարանական և ՏԻՄ-ի ընտրություններ, մարդահամար, Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի խնկարկում և Ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ նորակառույց հուշարձան-կոթողի հանդիսավոր բացում, Մայիսյան եռատոն և այլն/ և դրանց «գլխավոր կենտրոնակայանը» հանդիսանալու է Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտը: Հաշվի առնելով այդ իրողությունները, Բ.Սահակյանը համոզմունք հայտնեց, թե ինչպես միշտ, այս անգամ ևս Արցախի մայրքաղաքը հավուր պատշաճի կներկայանա հանրապետության այցելուներին և հյուրերին, հաջողությամբ կյանքի կկոչվեն այն բոլոր ծրագրերը, որոնք նախանշվել են քաղաքապետարանի կողմից, մանավանդ, որ համայնքը դրանք իրագործելու համար անհրաժեշտ միջոցներ և բավարար ներուժ ունի:

Ստեփանակերտի քաղաքապետարանի մամուլի քարտուղար